«Հացն ու գինին,

Տէր Կենդանին»

ՀԱՅՈՑ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՈՍՔԸ.

ԵԴԵՄԻ 8000-ԱՄՅԱ ՀԱՅԵՐԵՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Այսօր ողջ աշխարհին է հայտնի, թե Երկիր մոլորակի հնագույն քաղաքակրթությունները համարյա միաժամանակ ստեղծվել են Տիգրիս ու Եփրատ (Շումեր) և Նեղոս (Եգիպտոս) գետերի հովիտներում : Այդ քաղաքակրթությունները ստեղծողները անվանվում են շումերներ և եգիպտացիներ, իսկ նրանց լեզուները՝ շումերերեն և եգիպտերեն: Այս պարզեցված տեսակետը տարածված է հանրամատչելի գրականության մեջ և դպրոցական դասագրքերում: Իրականում, ինչպես ակադեմիական գրականության մեջ է ներկայացվում, առ այսօր շումերական և եգիպտական քաղաքակրթությունների ծագումը համարվում է հին աշխարհի պատմության մեծագույն առեղծվածներից մեկը: Շումերներն ու եգիպտացիները Միջագետքում ու Նեղոսի հովտում հայտնվում են որպես զարգացած մշակույթի կրողներ: Մինչ նրանց՝ նորաբնակների հայտնվելը, մշակույթի զարգացման նախնական փուլերը բացակայում են թե Միջագետքում, թե Նեղոսի հովտում: Նրանք իրենց հետ Միջագետք ու Նեղոսի հովիտ են բերում զարգացած երկրագործություն, անասնապահություն, ճարտարապետություն, գործիքներ, դիցարան, գիր,...: Թեև 100 տարուց ավել է ինչ վերծանվել են թե շումերական, թե եգիպտական գրերը և ընթերցվել բազմաթիվ արձանագրություններ, սակայն առ այսօր անհայտ է, թե **ովքե՞ր և որտեղի՞ց են իրենց մշակույթը բերել Միջագետք ու Նեղոսի հովիտ**: Որոշ գիտնականներ կարծիք են հայտնել, որ թե Միջագետքի և թե Նեղոսի հովտի քաղաքակրթությունները ստեղծողներն իջել են Հայկական լեռնաշխարհից:

2. Թեև հնագիտական առումով Հայաստանն այն աստիճան չի ուսումնասիրված, ինչպես Միջագետքը, Եգիպտոսն ու Պաղեստինը, սակայն եղած հնագիտական փաստերը հաստատում են, որ Հայկական լեռնաշխարհի բնիկներն են եղել աշխարհի հնագույն երկրագործները: Նրանք երկրագործությամբ սկսել են զբաղվել 12-13 հազար տարի առաջ: Երկրագործությանը զուգահեռ զբաղվել են անասնապահությամբ՝ ժամանակի ընթացքում ընտելացնելով այծ, շուն, ոչխար, վարազ, էշ, կով, գոմեշ, ձի: Դրանց հետևել են խեցեգործության և ապա մետաղաձուլության արհեստների յուրացումը: Քարե դարին փոխարինելու է գալիս պղնձե դարը և ստեղծվում են առաջին պղնձե գործիքները: Ահա այս պղնձե գործիքները պատրաստողներն են հայտնվում մինչ այդ սակավաբնակ Միջագետքում ու Եգիպտոսում և հիմնում այն քաղաքակրթությունները, որոնք այսօր աշխարհին հայտնի են որպես շումերական և եգիպտական: Հայկական լեռնաշխարհում ընթացող

քաղաքակրթական այս զարգացումներին զուգահեռ ստեղծվել է նաև գիր։ Նախնական պատկերագիրը հետզհետե դառնում է ավելի սխեմատիկ և ի վերջո վերածվում գծային նշանի, որն ի տարբերություն ընդհանուր հասկացություններ, տեսարաններ ու սյուժեներ արտահայտող պատկերագրի, արտահայտում է խոսքի որոշակի իմաստակիր միավոր՝ բառ։ Գծային նշանների և պատկերագրերի խառն օգտագործման օրինակներ ենք տեսնում Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներում, որոնց հնագույն նմուշները որոշ հետազոտողներ թվագրում էին Ք.ա. 8-րդ հազարամյակով։ Սակայն 10 տարի առաջ Ուռհա քաղաքի մոտ գտնվող Պորտաքար (Gobekli) հնավայրում գերմանացի հնագետները պեղեցին մի տաճարային համալիր, որը գործել էր Ք.ա. 10 հազարամյակում։ Տաճարի Т-աձև, լավ հղկված և 50 տոննա քաշ ունեցող սյուները ծածկված են գծային նշաններով ու պատկերագրերով։ Սա նշանակում է, որ ժայառապատկերներն առնվազն 12000 տարեկան են։ Գծային նշաններով նշանագրված խեցեղենն ի հայտ է գալիս Ք.ա. 8-րդ հազարամյակի վերջում։ Անվանի հնագետ Հարություն Մարտիրոսյանը հետազոտելով Հայաստանի ժայռապատկերների, վաղբրոնզեդարյան խեցեղենի, Արարատյան թագավորության շրջանի և հայկական միջնադարյան մատյանների նշանագրերը, ցույց է տվել, որ դրանք հայ պատկերագրության ժառանգական կիրառման տարբեր փուլեր են։ Ընդ որում, ավելի քան 12 հազարամյա գործածության ընթացքում այդ նշանագրերի գծագրությունը գործնականում չի փոփոխվել։

3. Շումերում և Եգիպտոսում գրի առաջին նմուշները հայտնվում են Ք.ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսին՝ այսինքն, Հայկական լեռնաշխարհում առաջին ժայռապատկերների գծագրումից ավելի քան 4000 տարի անց։ Շումերում օգտագործվում էր պատկերագրային գիր, որը գծայնանալով Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբում վերածվեց սեպագրի։ Եգիպտոսում օգտագործվում էր պատկերագրի հիմքի վրա ստեղծված հիերոգլիֆների գրային համակարգը, որից Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբում ստեղծվեց շեղագիրը՝ հիերատիկ գիրը։ Այս երկու գրերի տեսակները Եգիպտոսում օգտագործվեցին մինչև մեր թվարկության սկիզբը։

Հայկական ժայռապատկերներում ու միջնադարյան մատյաններում օգտագործված նշանագրերի և շումերական ու եգիպտական գրանշանների համեմատական հետազոտությունը ցույց է տալիս, որ իրար հետ քիչ ընդհանրություններ ունեցող շումերական և եգիպտական գրերը մեծ թվով ընդհանուր նշաններ ունեն հայկական ժայռապատկերների հետ։ Ելնելով այս փաստից և այն իրողությունից, որ շումերենը և եգիպտերենը վերծանված լեզուներ են, մենք խնդիր դրինք ժայռապատկերների նշանագրերն ընթերցել շումերական կամ եգիպտական համապատասխան (իմա՝ նույնական) նշանագրերի

միջոցով։ Ասվածը լուսաբանելու համար բերենք մի պարզ օրինակ։ Ստորև բերված ժայռապատկերի կենտրոնական պատկերն այծն է, որի մեջքին քառաթև խաչի նշան է, իսկ

ոտքերի տակ՝ երկկողմ խէչակ։ Եւ խաչի նշանը, և խէչակը գտնում ենք շումերական նշանագրերի մեջ։ Ստորև բերված աղյուսակում շումերական այդ նշանագրերն են, դրանց համապատասխանող սեպագրերը և համապատասխան գաղափարագիր իմաստները

Շումերական նշանագիրը	Համապատասխան սեպախումբը	Սեպախմբի գաղափարագիր իմաստը
		Այծ
		Տէր

Այսպիսով այս ժայռապատկերի միջոցով արտահայտվել է «Տէր Այծ» գաղափարը։ Ընդ որում, բուն այծի պատկերը հանդես է գալիս որպես «Տէր Այծ» իմաստը կրող որոշիչ (դետերմինանտիվ), որի այդ նշանակությունը բացահայտվում է «այծ» և «տէր» իմաստներն արտահայտող երկու գաղափարագրերի միջոցով։ Ընդ որում «այծ» իմաստն արտահայտող գծային գիրը քառաթև խաչն է։ «Տէր Այծ» արտահայտությունը հուշում է, որ այծի պատկերով փաստորեն արտահայտվել է «Աստուած» գաղափարը։ Հաջորդ ժայռապատկերում զույգ

այծերի առջև պատկերված է նույն «այծ» իմաստը կրող քառաթև խաչանշանը և ութաթև աստղանշան։ Շումերերենում ութաթև աստղանշանը նշանակում է = = «Աստուած, երկինք»։ Այսպիսով, այս ժայռապատկերի ընթերցումը կտա «Այծ Աստուած»։ Ժայռապատկերում փորագրված են երկու այծեր։ Շումերերենում քառաթև խաչանշանն ունի նաև «զույգ» իմաստը։ Այս պարագայում ժայռապատկերի ճշգրիտ ընթերցումն է «զույգ՝ երկվորյակ աստվածներ» և այդ երկվորյակ աստվածները պատկերված են երկու այծերի տեսքով։ Արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ ժայռապատկերը փորագրողների համար այծը եղել է Աստծո խորհրդանշանը։

4. Տրամաբանական է այն հարցը, թե ժայռապատկերը փորոգրողներն ինչ՞ու են այծի պատկերով արտահայտել «Աստուած» գաղափարը։ Հարցին պատասխանելու համար հակիրճ անդրադառնանք հնագույն պատկերային գրերի մի կարևորագույն առանձնահատկության։ Քանի որ այդ գիրն առարկայական էր՝ հիմնված տվյալ առարկայի նկարի վրա, ապա վերացական հասկացությունները (լինել, սեր, Աստուած, բարի և այլն),

որոնք հնարավոր չէ նկարել, արտահայտում էին համանուն առարկաների պատկերների միջոցով: Օրինակ, հայերեն «եղ» = «լինել, եղած, գոյացած բան» վերացական հասկացությունն արտահայտելու և հնչեցնելու համար հարկ կլիներ նկարել «եղան» առարկան կամ «եղն» կենդանին: Վերը բերված երկու ժայռապատկերների ընթերցումներից բխում է, որ ժայռապատկերները փորագրողների լեզվում «այծ» և «աստուած» բառերը համանուններ են: Այսպիսով խնդիրը հանգում է այդ լեզվի բացահայտմանը: Այս խնդիրը, համենայն դեպս հայ մարդու համար, արդեն հեշտ է, քանի որ Երկիր մոլորակի վրա «այծ» և «աստուած» բառերը համանուններ են միմիայն հայերենում: Հայերենում այծին տրված բազմաթիվ անվանումներից հնդևրոպական ստուգաբանություն ունեն երկուսը՝ «այծ» և «դիգ»: Հայերենում դիգ = «այծ» բառին համանուն է դիք = «Աստուած» բառը, իսկ «այծ» (բարբառներում՝ աձ, էձ, աձ, ազ) բառի համանունն է «Աստուած» բառի կրճատ և պատվո նշանով գրվող աձ ձևը: Հ. Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարան»–ի «Աստուած» բառահոդվածում գրում է. «... բառս երբեք ամբողջովին չէ գրուած մեր ձեռագրերի մէջ, այլ միշտ պատուով Աձ, Այ, յԱյ, Ավ»: Ընդ որում, Աձ = «աստուած» և աձ = «այծ» բառերի համանունությունը հայերենում չի սարքվել արհեստականորեն, այլ մի կողմից հետևանք է դիգ = «այծ» և դիք = «աստուած» բառերի համանունության, իսկ մյուս կողմից, բուն «աստուած» բառը կազմված է բնիկ հայերեն «աստ, հաստ» = «ուժ, զօրություն, հաստատունություն» և «աձ» = «այծ» բառերից: Այս պարագայում «Աստուած» բառի նախնական բառացի նշանակությունն է «զօրավոր այծ» կամ «զօրավոր խաչ», քանի որ այծի գաղափարագիր նշանը քառաթև խաչն է: «Հայ» անվանմանը մի բացառիկ ու կարևոր մեկանաբանություն տալու հնարավորություն է ընձեռնում հայերենը: Պատվո նշանով գրվող «Աստուած» բառի ուղղական ձևն է Աձ, սեռականը՝ Այ և բացառականը՝ յԱյ (կարդա՝ հԱյ), իմա՝ հայոց «հայ» ինքնանվանումը և հայոց Հայ Աստծո անունը: Հայերենում բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան կամ երևույթը, որից բխում, ծագում, սերում է գործողությունը: Հետևաբար «հայ ցեղ» արտահայտությունը համարժեք է «յԱստուծոյ ցեղ» արտահայտության պատվո նշանով կրճատ ձևին և բառացի նշանակում է «Հզօր այծից՝ Աստծուց (ծնված) ցեղ» : Ահա թե որտեղից է գալիս «Աստծո ընտրյալ ազգ» հասկացությունը: Այս հնագույն ժամանակների հիշողությունն էր դեռ կենդանի վաղ միջնադարում, երբ, ըստ Փավստոս Բուզանդի վկայության, պարսիկները հայերին կոչում էին «այծ հայեր» : Փաստորեն նույն՝ «Հզօր այծից՝ Աստծուց (ծնված)» իմաստն է կրում նաև Հայ դիցանունը և այդ իմաստը նույնական է Հայաստանյայց Առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցու Հավատո հանգանակի (Նիկիո հանգանակի) բնորոշման հետ. «Հավատում ենք ... Մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն՝ ծնված Հայր Աստծուց...»:

Որպես Արարիչ Աստված, Հայ Աստվածը վկայված է նաև շումերական արձանագրություններում: Շումերերենում Հայ դիցանունը գրվում HA.I3, որի վանկագիր ընթերցումն է Hai, իսկ գաղափարագիր ընթերցման դեպքում տալիս է երկու իմաստ. «Օծյալ Ձուկ» և «Այծաձուկ»: Այս երկու իմաստները հետևանք են այն բանի, որ HA սեպախմբի գաղափարագիր իմաստն է «ձուկ», իսկ I3 սեպախումբն ունի «յուղ; օծել» նշանակությունը և միաժամանակ այդ սեպախումբը կարելի է ընթերցել dig = դիգ = այծ: Այս պարագայում Այծ Աստուած > Խաչ Աստուած, Աստծո Որդի, Օծյալ Ձուկ մականունները կրող **Հայ Աստուածը** միարժեքորեն նույնանում է Քրիստոսի հետ: Այսպիսով, ժայռապատկերները վկայում են, որ հայերը միշտ մնալով իրենց աստվածատուր ծննդավայրում, ճշմարիտ աստվածապաշտության ուղու վրա են եղել առնվազն անցած 10000 տարիների ընթացքում:



Ի դեպ, պատվո նշանի կիրառումը ևս գալիս է ժայռապատկերների ժամանակներից: Բերված ժայռապատկերում զույգ մարդակերպ էակների գլխավերևում պատկերված պատվո նշանը ցույց է տալիս, որ նրանք աստվածություններ են:

5. Անդրադառնանք հաջորդ ժայռապատկերին, որը կազմված է գծային նշանագրերից: Այս նշանագրերից յուրաքանչյուրն իր համարժեք զուգահեռն ունի եգիպտական հիերոգլիֆների համակարգում: Օգտվելով այդ հիերոգլիֆների հայտնի իմաստներից փորձենք ընթերցել բերված ժայռապատկերը:

Հայկական ժայռապատկերը	Եգիպտական հիերոգլիֆները և նրանց իմաստները
	= աջակցություն = հովանավորություն, պաշտպանություն = Արևի ժողովուրդ, արևորդիներ = աճել, զօրանալ, ուժեղանալ

Արդյունքում ժայռապատկերի ամբողջական իմաստի համար կունենանք. «Աջակցություն և հովանավորություն Արևի ժողովրդի զօրացմանը»: Արևի ժողովուրդ կամ արևորդիներ էին կոչվում հին Եգիպտոսի պաշտամունքային հնագույն կենտրոնի՝ Հելիոպոլիսի բնակիչները, ովքեր արևի Ար կամ Արա (Ra) աստծո քրմերն էին: Հայոց «արևորդիներ» ինքնանվանումը պահպանվել է մինչև մեր օրերը:

6. Հաջորդ ժայռապատկերի տվյալները մեզ հանգեցնում են առավել քան սենսացիոն արդյունքի: Ընթերցումն ու ընկալումը մի փոքր հեշտացնելու համար նախ բերենք ժայռապատկերում պատկերված արտաքին բոլորագիծը և նրանից դուրս գտնվող նշանները: Ինչպես տեսնում ենք, ժայռապատկերի այս մասում կան 8

այծապատկերներ, մեկական մարդու և առյուծի պատկերներ։ Առյուծի պատկերը գտնվում է ժայռապատկերի վերին մասում գտնվող 4 նշանագրերից կազմված խմբի առաջին և երկրորդ նշանների միջև։ Այժմ մենք պիտի փորձենք ընթերցել 4 նշանագրերից ու առյուծի պատկերից կազմված այս տողը, որն իր դիրքով կարծես հանդես է գալիս որպես ժայռապատկերի վերնագիր։ Ավանդաբար առյուծը եղել է ընդգծված արեգակնային էություն ունեցող գերագույն, արարիչ աստծո խորհրդանշանը (ուշադրություն դարձնենք նաև հայերենում «**արեւ**» և «առյուծ» բառի գրաբարյան «**առեւ-ծ**» ձևի ընդհանրությանը, ինչն այս երկու բառերը դարձնում է համանուններ)։ Առյուծի պատկերից առաջ փորագրված է այծի անավարտ թվացող պատկեր։ Իրականում այծի եղջյուրների և իրանի գծերով պատկերված է դրօշ։ «Դրօշ»–ը հայերենում ունի «դրօշակ» և «աստծո պատկեր, արձան, կուռք» իմաստները։ Նախնականն անշուշտ «աստծո պատկեր, արձան, կուռք» իմաստն է, քանի որ նախապես դրօշ էր ամեն մի աստվածության խորհրդանշանի փորագրված պատկեր կամ արձանիկ, հետագայում այդ խորհրդանշական արձանիկը տեղադրվում էր բարձր ձողի վրա և տեղափոխվում ծիսական երթերի ու արարողությունների ժամանակ, իսկ ավելի ուշ՝ աստծո կամ այլ իշխանական խորհրդանշանը պատկերվեց շորի վրա և առաջացավ ժամանակակից դրօշակը։ Այսպիսով դրօշը նախապես նշանակել է աստծո պատկեր, արձան։ Այս պարագայում մեր ժայռապատկերի այծապատկեր դրօշը նույնական է դրօշի պատկեր ունեցող և «աստված» իմաստը կրող եգիպտական հիերոգլիֆի հետ, որն օգտագործվում է որպես դիցանունների որոշիչ (դետերմինանտիվ)։ Այս հիերոգլիֆի հնագույն՝ վաղ դինաստիական նմուշները (Ք.ա. 4-րդ հազ. երկրորդ կես) չունեն դրօշը եզրափակող ուղղահայաց գծիկը () և ճիշտ նույն ձևով արտապատկերում են այծի իրանն ու եղջյուրները, ինչպես ժայռապատկերներում ( )։ Հետևաբար ժայռապատկերի «դրօշ» և «առյուծ» նշանները կարող ենք ընթերցել «Առյուծ աստված» կամ, որ նույնն է՝ «Արարիչ Աստված»։ Առյուծին հաջորդող երեք նշանագրերի համար եգիպտական հիերոգլիֆների համակարգում ունենք հետևյալ նույնությունները.

Ժայռապատկերի նշանը	Եգիպտական հիերոգլիֆ գրանշանը	Եգիպտական գրանշանի հիերատիկ ձևերը	Գրանշանի իմաստը
			տուն, բնակարան
			ծառ, գագաթ
			պաշտպանել

Արդյունքում, ժայռապատկերի քննվող տողի համար կունենանք «Արարիչ Աստծո տան ծառի պաշտպանությունը» բառացի իմաստը։ Այժմ բերենք մեր ժայռապատկերի ամբողջական տեսքը և տեսնենք թե ինչ ծառի մասին է գնում խոսքը։ Արտաքին կիսաշրջանի մեջ բացվածքով հակառակ ուղղված ևս մի կիսաշրջան է, որի կենտրոնում բուն ծառի պատկերն է։ Ժայռապատկերներում տարբեր աստիճանի սխեմավորված այս ծառապատկեր նշանը () հաճախ է հանդիպում։ Նույն նշանը տեսնում ենք շումերական կնիքների վրա ( )։ Եգիպտական հիերոգլիֆների համակարգում ժայռապատկերի այս նշանի համարժեքն է «խաչ, կեանք, ապրել» և «այծի պաշտպանություն» իմաստները կրող հիերոգլիֆը ( )։ Ուշադրություն դարձնենք, որ եգիպտական այս մի խորհրդանշանի մեջ գողտրիկ ձևով իրար են ագուցված «կեանք», «խաչ = այծ» և «այծի պաշտպանություն» հասկացությունները, որոնց ավելի ցայտուն ու բացահայտ կապերը տեսնում ենք ժայռապատկերներում։ Արդյունքում, «կեանք» իմաստը կրող եգիպտական հիերոգլիֆը մեզ հուշում է, որ ժայռապատկերի նշանների կենտրոնում դրված ծառապատկեր նշանը պիտի ունենա «Կենաց Ծառ» իմաստը։ Դա հաստատվում է և այն փաստով, որ եգիպտական խաչի հիերոգլիֆը կարելի է մեկնաբանել որպես կցագիր՝ կազմված «ծառ» հիերոգլիֆից և «գոյություն, կյանք» իմաստը կրող ու քառաթև խաչի տեսք ունեցող հիերոգլիֆից. = + = «գոյության ծառ», «կյանքի ծառ»։ Եւ հազարամյակներ անց մեծն Գրիգոր Տաթևացին փաստում է. «...որպէս ծառն կենաց՝ ի մէջ դրախտին՝ խաչն էր...»։ Նշենք նաև, որ եգիպտական հիերոգլիֆների համակարգում կցագիրը տարածված երևույթ է (օրինակ՝ = +)։

Ժայռապատկերի արտաքին շրջանագծի խզվածքը փակող երկու այծերից վերև գտնվող նշանը ( ) նույնական է եգիպտական հիերոգլիֆի հետ, որի հիերատիկ գրելաձևերն են՝ , , , ։ Այս հիերոգլիֆն ունի «փականքի տակ դնել, ճանապարհը փակել, արգելք լինել, խոչնդոտել» իմաստները։ Հետևաբար, ժայռապատկերը ցուցում է, որ դեպի Կենաց Ծառ տանող ճանապարհը փակում, իմա՝ Կենաց Ծառը պաշտպանում են զույգ այծերը։ Ինչպես ժայառապատկերում, շումերական կնիքների վրա ևս Կենաց Ծառի պահապաններն այծեր են։ Բերված շումերական երկու կնիքներից առաջինի վրա Կենաց Ծառը պատկերված է երկու այծերի միջև և Տիեզերական լեռան վրա։ Այծերից յուրաքանչյուրի




գլխավերևում մեկական խաչ է պատկերված։ Երկրորդ կնիքի վրա Տիեզերական լեռան սխեմատիկ պատկերի (եռանկյունի) վրա Կենաց Ծառն է և նրա աջ ու ահյակ կողմերում այծերին փախարինում են միայն մեկական խաչ։ Այստեղ ևս ակնհայտորեն միահյուսված են «այծ», «խաչ» և «Կենաց Ծառ» գաղափարները։ Այսպիսով, շուրջ 5500 տարի առաջ Միջագետքում և Նեղոսի հովտում ապրողները էությունների ոլորտում նույնացնում էին խաչն ու այծը և նրանց համարում Կենաց Ծառի պահապաններ։ Նաև հայտնի իրողություն է, որ մինչ նրանց հայտնվելը ոչ Միջագետքում և ոչ էլ Նեղոսի հովտում այծ չի եղել։ Բոլորին է հայտնի ,որ բեզոարյան վայրի այծի հայրենիքը Հայաստանն է, որտեղ էլ այն ընտելացվել է անհիշելի ժամանակներում ու իրեն ընտելացնողի հետ տարածվել աշխարհով մեկ։ Այդ անհիշելի ժամանակներից է հայերենը պահպանել «խաչ» բառով կազմված «խաչենեակ» = «արու այծ» անվանումը և «խաչ» բառի «խոչ» ձայնադարձը, որն ունի «արգելք» իմաստը, որպես արձագանգ Կենաց Ծառին մոտենալու արգելքի. «Եւ եհան զԱդամ եւ բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան եւ հրամայեաց քերոբէից եւ բոցեղեն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց» (Ծննդոց, Գ,24)։ Ժայռապատկերի վրա ևս Կենաց Ծառի

պահապանները պատկերված են «շուրջանակաւ»։ Կենաց Ծառը կամ նույնացվում էր Երկնքի հաստատությունը պահող Տիեզերական լեռան հետ կամ պատկերվում էր այդ լեռան վրա։ Շումերական աղբյուրները, որպես Աստծո Տուն և Կենաց Ծառի (=Տիեզերական լեռան) երկիր, նշում են Հայաստանը։ Այս պատկերացումն անցավ աքքադացիներին, նրանցից էլ՝ մյուս սեմական ցեղերին, ինչն ի վերջո հրեաների կողմից գրառվեց Հին Կտակարանում։ Ստորև աքքադական թագավոր Նարամ Սուենի (Ք.ա. 21-րդ դար) հայտնի կոթողն է, որտեղ Համաշխարհային լեռան տեսքով, որի շուրջը պտտվում են երկնային լուսատուները, պատկերված է Հայկական լեռնաշխարհը։ Կոթողի պատկերը նույնությամբ կրկնում է այն նկարագիրը, որ Անանիա Շիրակացին տալիս է Բարձր Հայքին։ Համաշխարհային լեռան այս նկարագիրը շատ էր տարածված հին աշխարհում։ Սակայն եթե մնացած դեպքերում (հնդկական Մերու, իրանական Հարա Բերեզայթե, հունական Ատլանտիդա և այլն) վերաբերում էին առասպելական երկրների, ապա Շիրակացու նկարագրությունը համապատասխանում է երկրային՝ իրական աշխարհագրությանը։ Այս բոլոր փաստերը վկայում են, որ շումերական և եգիպտական քաղաքակրթությունները հիմնողները Հայկական լեռնաշխարհից իրենց հետ տարել են և ժայռապատկերներում վկայված

գրանշանները, և Աստծո Տան ու Կենաց Ծառի դիցաբանական գաղափարները: Այս փաստն իր հերթին վկայում է, որ Ուխտասարի ժայռապատկերը ստեղծվել է շումերական և եգիպտական քաղաքակրթությունների հիմնումից առաջ, իմա՝ առնվազն Ք.ա. 6-5 հազարամյակներում: Այսպիսով մեզնից առնվազն 7-8 հազար տարի առաջ է հայ քուրմը Ուխտասարի լանջի քարաբեկորին դրոշմել այն գաղափարները, որոնք հազարամյակներ անց ծննդավայր վերադարձան Ծննդոց գրքի միջոցով: Ուխտասարի արևակեզ քարաբեկորի վրա փորագրված այս ժայռապատկերը ահգնահատելի համարդկային պատմա–մշակութային բացարձակ արժեք է: Այն ցույց է տալիս, որ Աստծո Տուն = Եդեմի և նրա կենտրոնում Աստծո տնկած Կենաց Ծառի գաղափարները հին աշխարհ են մտել Հայաստանից:

7. Շումերենում բուն «աստուածություն» և «աստուած» հասկացությունները, որպես ութաթև աստղանիշի ընթերցում, համապատասխանաբար հնչեցվում են digir և ilu կամ el: Սրանք ծագումնաբանորեն կապված են բնիկ հայերեն դիգ = «այծ» և ել = «ելնել, բարձրանալ, ծագել» արմատների հետ: Հին Կտակարանում հաճախ օգտագործվող «բարձրեալ» բնութագիրը, որպես Աստծո մականուն, բացահայտում է շումերերեն, իսկ հետագայում բոլոր սեմական լեզուներին անցած, ilu = el = «աստուած» բառի ծագումնաբանական կապը բնիկ հայերեն ել = el = «բարձր, բարձրանալ» արմատի հետ: Ինչպես նշեցինք, եգիպտերենում «աստված» գաղափարն արտահայտվել է ⌉ դրօշ պատկերող հիերոգլիֆը և այն նույնացրինք հայերեն դրօշ = «աստծո պատկեր, արձան, կուռք» բառի հետ: Եգիպտագետները դրօշ պատկերող հիերոգլիֆն ընթերցում են nṭr: Հարկ է նշել, որ հին եգիպտերենը կոնսոնանտ լեզու է և գրառվել են միայն բառի բաղաձայն հնչյունները: Հետևաբար բառի հնչողությունը վերականգնելու համար անհրաժեշտ է այն ճշգրիտ ձայնավորել, իմա՝ բաղաձայն հնչյունների միջև դնել չգրառված ձայնավորները: Այս պարագայում եթե nṭr բառը ևս կազմված է հայերենի հիմքի վրա, ապա այն պիտի լինի դրօշ = «աստծո պատկեր, արձան, կուռք» բառի հայերեն հոմանիշը: Հայերենում կա «դրօշ» բառի այդպիսի հոմանիշ. դա nṭr < anṭri = անդրի = «արձան» բառն է: Հայկազյան բառարանը «անդրի» բառը համարում է փոխառություն հուներեն ἀνδρίάς = «մարդու արձան» (բառացի՝ «այրական») բառից, որը ծագում է ἀνήρ = «այր, մարդ» բառից: Իմ կարծիքով, փոխառությունը կատարվել է հակառակ ուղղությամբ և հայերեն «անդրի» բառը գալիս է այն հնագույն ժամանակներից, երբ կերտվում էին միմիայն աստվածների արձանիկներ, որպես կուռքեր և ծագում է հայերեն «անդր–» = «առաջին, վեր,գեր» արմատից, որից ծագում է նաև «անդրանիկ» = «նախածին, միածին, երիցագոյն, նախկին»: Ինչպես տեսնում ենք, հայերեն «անդր» և «անդրանիկ» բառերը կրում են զուտ դիցաբանական գաղափարներ և բնական է, որ «անդրի» բառին վերագրվեր նախնական «Աստծո արձան,

կուռք» իմաստը, որը շատ ավելի ուշ շրջանում հուներենը վերցրել ու գործածել է «մարդու արձան» իմաստով: Այսպիսով, «Աստված» գաղափարն արտահայտելու համար հին եգիպտերենում օգտագործվել են հայերենում հոմանիշ և «Աստծո արձան, կուռք» իմաստը կրող «դրօշ» ու «անդրի» բառերը: Ընդ որում, Նեղոսի հովիտ է տարվել «դրօշ» նշանագիրը, սակայն այն ընթերցվել է «անդրի» հոմանիշով: Հայկական ժայռապատկերներում ութաթև աստղանիշը և դրօշը ունեցել են զուգահեռ գործածություն: «Դրօշ» = «անդրի» նշանն առկա է նաև հաջորդ ժայռապատկերում, որը կազմված է 6 գծային նշանագրերից և մի այծապատկերից: Առաջին՝ նշանի շումերական համարժեքն է «ուժ, զօրություն» իմաստը կրող նշանը, իսկ եգիպտական համարժեքը՝ «աճել, զօրանալ, մեծանալ» իմաստը կրող հիերոգլիֆը: Երկրորդ՝ նշանի շումերական համարժեքը բացակայում է, իսկ եգիպտական համարժեքը հանրահայտ կարտուշի նշանն է, որի ներսում գրվում էին

աստվածների ու փարավոնների անունները: Եգիպտական հիերոգլիֆների համակարգում կարտուշի նշանին ոչ մի իմաստ չի վերագրվում: Սակայն ժայռապատկերի ու կարտուշի նշանի նույնական պատկերը գտնում ենք նաև հայկական նշանագրերի ցուցակում , որին վերագրվում է «անվախճան» իմաստը: Այս պարագայում հայկական նշանագիրն է օգնում վերականգնելու եգիպտական հիերոգլիֆի իմաստը: Ելնելով հայկական նշանագրի իմաստից, կարտուշի նշանին «անվախճան» իմաստ վերագրելն անկասկած ճիշտ է, քանի որ Եգիպտոսում անվախճան էին համարվում աստվածներն ու փարավոնները և այդ պատճառով էլ միայն նրանց անուններն էին գրվում կարտուշի նշանի ներսում: Ժայռապատկերի երրորդ՝ նշանն արդեն ծանոթ «դրօշ» = «աստված, կուռք» նշանագիրն է: Ժայռապատկերի չորրորդ՝ նշանի զուգահեռներն են. հայկական նշանագրերի ցուցակում «հաստատ» իմաստը կրող նշանը, իսկ եգիպտական հիերոգլիֆների համակարգում՝ «լինել,գոյություն ունենալ, ապրել, կենդանի» իմաստները կրող հիերոգլիֆի հիերատիկ գրելաձևը (, , ,): Այսպիսով, այծապատկերի վերևը պատկերված 4 նշանագրերն արտահայտում են «Հզօր, անվախճան Աստված կենդանի» բանաձևը, որպես նշանագրերից ցած պատկերված այծի բնութագիր:

8. Այժմ փորձենք պարզել, թե ինչ Աստված է թաքնված այս բնութագրի տակ: Նախ

նշենք, որ «Հզօր, անվախճան Աստված կենդանի» բնութագիրը որոշակի ընդհանրություն ունի «Սասնա Ծռեր» էպոսում Աստծուն տրվող «Տէր կենդանի» բանաձևի հետ: Նշեցինք նաև, որ արեգակնային էություն ունեցող արարիչ Աստծուն կենդանական աշխարհում մարմնավորում է առյուծը: Ստորև

բերված ժայռապատկերում նիզակ ու վահան բռնած մարդակերպ Աստվածը պատկերված է զույգ առյուծների հետ: Գեղամա լեռների և Սյունիքի ժայռապատկերներում նիզակով ու վահանով կամ միայն նիզակով բազմաթիվ մարդակերպ ֆիգուրներ կան: Ստորև բերված է նման պատկերների մի շարք, վերցված միայն Ուխտասարի տարբեր ժայռապատկերներից.

: Նիզակ ու վահան կրող այս մարդակերպ աստվածության էությունն ու անունը պարզելու համար նորից դիմենք շումերական ու եգիպտական վերծանված գրերի օգնությանը: Եգիպտական հիերոգլիֆների համակարգում նիզակ ու վահան կամ երկու նիզակներ կրող, ավանակի գլխով մարդակերպ հիերոգլիֆը ներկայացնում էր Սէթ Աստծուն (նկարները տես ստորև): Էշը Սէթ Աստծո

(հունական դիցարանում հիպերբորեական Ապոլլոնի) կենդանին էր և արտահայտում էր Աստծո «Մեծ» մականունը: «Էշ» = «աւանակ» և «իշ, էշ» = «մեծ, շատ» բառերը համանուններ են միայն հայերենում (իշայծյամ=մեծ այծյամ, իշամեղու=մեծ մեղու և այլն): Եգիպտերենում համանուններ են aA=«աւանակ» և aA=«աւագ, մեծ» բառերը: Ավանակի գլխով պատկերներ կան և ժայռապատկերներում (տես 9–րդ պատկերը նկարների վերին շարքում): Հին թագավորության շրջանում (Ք.ա. 3-րդ հազ. առաջին կես) Սէթը Վերին (հարավային) Եգիպտոսի և փարավոնի հովանավոր Աստվածն էր: Այնտեղ են գտնվում նրա պաշտամունքի հնագույն օջախները: Եգիպտական քաղաքակրթությունը ստեղծող «դինաստիական ռասան» Սինայի թերակղզուց նավակներով անցնելով Կարմիր ծովը, հենց Վերին Եգիպտոսում է հիմնում այն նախնական քաղաքակրթական օջախը (Նաքադ II հնագիտական մշակույթ), որի հիմքի վրա ծաղկում է հետագա ողջ եգիպտական մշակույթը: Եգիպտոսում Սէթը վերստին գերագույն Աստված է հռչակվում հիքսոսների տիրապետության շրջանում (սկսած Ք.ա. 18-րդ դարի սկզբից): Սեմական ազդեցության՝ Սաիսյան շրջանում (Ք.ա. 8–րդ դար), Սէթը հռչակվում է չար, թշնամի աստված և ոչնչացվում են Սէթի անվան հետ կապված արձանագրությունները, արձանները, պաշտամունքի կենտրոնները: Հիերոգլիֆիկ գրությամբ Սէթի անունը հնչեցվում է Stx և hAj կամ hj: Այս երկրորդ անվանաձևը նույնական է շումերական EN.KI = Hai դիցանվան հետ և միաժամանակ առկա է հայկական ժայռապատկերներում: Հաջորդ ժայռապատկերում նիզակով զինված մարդակերպ աստվածությունն է և արարիչ Աստծո խորհրդանշանը՝ առյուծ: Առյուծի գավակին պատկերված է շումերական ● = ⊲ = «Տէր» գաղափարագիր նշանը: Առյուծից ցած պատկերված նշանը (𓄿) առկա է եգիպտական հիերոգլիֆներում (𓄿), որի հնչյունական համարժեքն է Hab կամ Hb: Այս Hab կամ Hb բառը, որպես առյուծի բնութագիր, մենք կապում

ենք հայերեն «հաւանի» = «արու առյուծ» բառի հետ (գործել է b>w = ւ հնչյունափոխությունը)։ Այս նույնացման օգտին է վկայում Գիզայի մեծ սֆինքսի Hw եգիպտերեն անվանումը, որը ևս «հաւանի» = «արու առյուծ» հայերեն բառն է, քանզի Գիզայի մեծ սֆինքսը ևս մարդու գլխով առյուծ է։ Նիզակով մարդու պատկերից աջ գտնվող նշանը նույնական է շումերական = գաղափարագիր նշանի հետ։ Ըստ անվանի շումերագետ Պ. Անտոն Դեյմելի, այս սեպախումբն ի շարս այլ ընթերցումների, ունի նաև haia ընթերցում։ Այսպիսով, նիզակ կամ վահան ու նիզակ կրող մարդակերպ աստվածությունը հայ-շումերա-եգիպտական գրային համակարգում ունի միևնույն «Հայ» ընթերցումը և ներկայացնում է հայոց արարիչ Հայ Աստծուն։ Աշխարհում, հայերից բացի, ոչ մի այլ ազգ չի հավակնում «հայ» անվանմանը։ Մյուս կողմից, ըստ հնագույն կարգի, ազգն իր անունն ու ծագումը բխեցնում էր յուր դիցարանի գերագույն աստծուց։ ... Արարիչ Հայ Աստուածը արարեց առաջին մահկանացու և մեր նախահայր Հայիկին, որ է Հայկը, Հայկը սերեց Արամանեակին, Արամանեակը սերեց Արամայիսին, ...։

Հին Եգիպտոսում Հայ Աստծո առավել տարածված Stx անվանումը չունի բավարար բացատրություն։ Սակայն միևնույն Աստծո Stx և Haj ձևերի զուգահեռ գոյությունը հուշում է, որ Stx-ը ևս պիտի լինի հայերեն կազմություն։ Հայերենում «շինել, արարել, ստեղծել» իմաստը կրող 3 հոմանիշ բառարմատներ կան. «ար», «դի (դնել)» և «ստեղ-» նախնականը՝ «՛ստա-»։ Առաջին արմատից են ծագում Ար կամ Արա դիցանունը և «արարիչ» բառը, երկրորդից՝ «դիգ» =այծ բառի համանուն «դիք» = աստուած բառը և վերջապես երրորդից՝ «ստեղծ» =արարչագործել, «ստանալ» =ստեղծել, շինել, հաստատել, «ստեւող» =արարող, արարիչ, «ստոյգ» = «է» = ճշմարիտ էություն։ «Արարիչ, արարչագործ» իմաստով այս «ստեղ» արմատն ենք տեսնում եգիպտական Stx դիցանվան մեջ, որպես Հայ Աստծո ամենատարածված մականուն հին Եգիպտոսում։

9. Միայն Ուխտասարի այս մի քանի ժայռապատկերների քննությունից բխում է, որ

ա. Ք.ա. 8-րդ հազարամյակից սկսվող ժայռապատկերային մշակույթը ստեղծել են հայալեզու մարդիկ, ովքեր պաշտել են Մեկ Արարիչ Աստծո, որի անունը Ք.ա. 3-րդ հազարամյակի շումերական և եգիպտական աղբյուրներում վկայված է Հայ ձևով;

բ. «Շումերներն» ու «եգիպտացիները» պաշտել են Հայ Աստծուն, օգտագործել են Հայաստանի ժայռապատկերային նշանագրերի հիմքի վրա ստեղծված գրային համակարգեր։

Արդ՝ ովքե՞ր են շումերներն ու եգիպտացիները...

Օգտագործված գրականության համառոտ ցանկը.

Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970

Հ. Մարտիրոսյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1981

Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսնում է նախնադարում, Երևան, 1978

Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973

Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1973

R. Labat, Manuel d'epigraphie akkadienne, Paris, 1972

P. Anton Deimel, Šumerisch-akkadisches glossar, Roma, 1934

A. Erman, H. Grapow, Wörterbuch der Aegyptischen Sprache, Berlin, 1971

L. Delaporte, Catalogue des cylinders, cachets et pierres gravees de style oriental, Paris, 1923

G. Möller, Hieratische paläographie, Leipzig, 1909-1936

W. Budge, Egyptian hieroglyphic dictionary, New York, 1978

Ю. Перепелкин, Основы египетской раннединастической эпиграфики, М. А. Коростовцев. Писцы Древнего Египта. СПб, 2001. С. 309-335.

Համլետ Մարտիրոսյան

e-mail hmart@crdlx5.yerphi.am

"Հայաստանի Հանրապետություն", 12 մայիս, թիվ 86(3942)